

Բյուրեղավանի արհեստագործական ուսումնարանը հիմնադրվել է 1974 թվականին «Հայապակի» արտադրական միավորման բազային ձեռնարկության հիման վրա: Այդ ժամանակ ուսումնարանը կոչվել է Բյուրեղավանի № 51 պրոֆտեխնիկական ուսումնարան և ունեցել է հետևյալ մասնագիտություններով խմբեր`

- ապակու փորագրող
- ապակու տեխնիկական հսկիչ ավտոփականագործ
- չափիչ-հսկիչ սարքերի փականագործ
- խեցեգործ
- քարի փորագրող
- խոհարար
- կարող
- մոտորավար

Այդ տարիներին ուսումնարանը ունեցել է շուրջ 450 սովորող: Բացի միջնակարգ պրոֆտեխնիկական խմբերից ուսումնարանը կադրեր է պատրաստել միայն մեկ տարվա պրոֆ.խմբերում:

2001 թվականին ուսումնարանն Վերանվանվել է Բյուրեղավանի արհեստագործական ավագ դպրոց: Ուսուցումը տարվել է 2 տարի ժամկետով և շրջանավարտները ստացել են միջնակարգ կրթության ատեստատ և մասնագիտական դիպլոմ:

ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի № 2010 ն որոշմամբ Բյուրեղավանի արհեստագործական ավագ դպրոցը վերանվանվել է Բյուրեղավանի արհեստագործական ուսումնարան` Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ: 2010թվականից ուսումնարանում գործում են հետևյալ մասնագիտություններ, խմբերը`

- ավտոփականագործ
- վարսահարդար
- համակարգիչների շահագործում
- հաշվետարություն
- կարի արտադրության տեխնոլոգիա:

Ուսուցումը տարվում է երեք տարի ժամկետով, սովորողները ստանում են միջնակարգ կրթության ատեստատ և մասնագիտական դիպլոմ: Սովորողները ստանում են նաև կրթաթոշակ`4650դր:

2010թվականին ուսումնարանի սովորողների թիվը 135-ն է: Ուսումնարանը համալրված է բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետներով, որոնց աշխատանքի շնորհիվ ուսումնարանը ամեն տարի տալիս է բարձր կարգի մասնագետներ աշխատաշուկայի համար:

Ուսումնարանի տնօրեններն եղել են`

- 1974-1981թթ Հակոբյան Սերգեյ
- 1981-1983թթ Խանգադյան Լևոն
- 1983- 1986թթ Զոհրաբյան Յուրա
- 1986-1991թթ Հակոբյան Ֆելիքս
- 1991թվականից Հարությունյան Հենգել

{jcomments off}

